ՎԴ/3461/05/20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2 հուլիսի 2021 թվական ք. Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի Արեգ Կարապետյանի ընդդեմ Երևանի քաղաքապետի՝ Երևանի քաղաքապետի 2020 թվականի ապրիլի 10-ի թիվ 1413-Ա որոշման 2-րդ կետն անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ 2020 թվականի ապրիլի 13-ի թիվ 1423-Ա որոշումն անվավեր ճանաչելու, Երևանի քաղաքապետին 2020 թվականի փետրվարի 12-ի թիվ 444-Ա որոշման պայմաններին համապատասխան նոր մրցույթ հայտարարելուն և անցկացնելուն պարտավորեցնելու պահանջների մասին թիվ ՎԴ/3461/05/20 գործով ենթակայության մասին վեճը լուծելու համար Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի ապրիլի 27-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Արեգ Կարապետյանը 2020 թվականի հունիսի 10-ին հայցադիմում է ներկայացրել Վարչական դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետի, որով պահանջել է անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետի՝ 2020 թվականի ապրիլի 10-ի թիվ 1413-Ա որոշման 2-րդ կետը, որպես հետևանք՝ անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետի՝ 2020 թվականի ապրիլի 13-ի թիվ 1413-Ա որոշումը, պարտավորեցնել Երևանի քաղաքապետին 2020 թվականի

փետրվարի 12-ի թիվ 444-Ա որոշման պայմաններին համապատասխան հայտարարել և անցկացնել նոր մրցույթ:

2. Վարչական դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) 2020 թվականի հուլիսի 21-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

3. Դատարանը (դատավոր՝ Հ.Այվազյան) 2021 թվականի մարտի 24-ին որոշում է կայացրել հայցադիմումը վերահասցեագրելու մասին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«Դատարանի գնահատմամբ ներկայացված պահանջը չի բխում հանրային իրավահարաբերություններից, այլ գործարքն, մասնավոր իրավահարաբերությունների ոլորտում, առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին մասով, մրցույթ է կազմակերպել իր ենթակայության ներքո գտնվող համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր հաստիքը համալրելու համար:*

Հարկ է նկատել, որ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում հանրային ծառայություն չի իրականացվում և համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնը չի համարվում հանրային կամ այլընտրանքային ծառայության պաշտոն և ընդգրկված չէ համապատասխան պաշտոնների անվանացանկում, ուստի և դրա ընտրության (նշանակման) մրցույթի կազմակերպումը ևս չի կարող բխել հանրային իրավահարաբերություններից:

Ամբողջ վերը նշվածի հիման վրա Դատարանը եզրահանգում է, որ հայցվոր Արեգ Մեսրոպի Կարապետյանի ներկայացրած պահանջը Վարչական դատարանում քննության ենթակա չէ, ուստի այն պետք է վերահասցեագրվի ըստ ընդդատության՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի առաջին ատյանի դատարան, իսկ Երևանի քաղաքապետարանի գտնվելու վայրն է ք. Երևան, Արգիշտի 1 հասցեն»:

4. Թիվ ՎԴ/3461/05/20 գործը 2021 թվականի ապրիլի 16-ին մակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ե. Եսոյանին:

5. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2021 թվականի ապրիլի 27-ի որոշմամբ գործի ենթակայության շուրջ ծագած վեճը լուծելու նպատակով գործն ուղարկել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ հետևյալ

պատճառաբանությամբ. *«Ուսումնասիրելով թիվ ՎԴ/3461/05/20 վարչական գործի նյութերը՝ դատարանը գտնում է, որ տվյալ գործի քննությունը պետք է կատարվի Վարչական դատարանի կողմից, քանի որ հայցի հիմնական առարկան և պահանջը հանդիսանում է Երևանի քաղաքապետի 2020 թվականի ապրիլի 10-ի թիվ 1413-Ա որոշման 2-րդ կետն անվավեր ճանաչելը, իսկ 2-րդ կետով սահմանվել է, որ պետք է ուժը կորցրած ճանաչել Երևանի քաղաքապետի 2020թ. փետրվարի 12-ի «Երևան քաղաքի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթ անցկացնելու մասին» N444-Ա որոշումը:*

Իսկ հայցվորի մյուս՝ որպես հետևանք՝ 2020 թվականի ապրիլի 13-ի թիվ 1423-Ա որոշումն անվավեր ճանաչելու, Երևանի քաղաքապետին 2020 թվականի փետրվարի 12-ի թիվ 444-Ա որոշման պայմաններին համապատասխան նոր մրցույթ հայտարարելուն և անցկացնելուն պարտավորեցնելու մասին հայցապահանջները համարվում են հիմնական պահանջի ածանցյալ պահանջներ, ինչի հիման վրա Վարչական դատարանը որոշում է կայացրել թիվ ՎԴ/3461/05/20 վարչական գործը վերահասցեագրել ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

(...) Տվյալ պարագայում, թիվ ՎԴ/3461/05/20 գործի շրջանակներում առաջացել է վեճ՝ տվյալ գործի ենթակայության վերաբերյալ, քանի որ Վարչական դատարանի որոշմամբ տվյալ գործի կոնկրետ որ դատարանում քննելու վերաբերյալ առկա են տարբերվող դիրքորոշումներ:

Հաշվի առնելով այն, որ յուրաքանչյուր դեպքում վեճը դատարանին ենթակա լինելու հարցը պարզելիս դատարաններն առաջին հերթին պետք է ելնեն վիճելի իրավահարաբերության բնույթից, և տվյալ թիվ ՎԴ/0872/02/11 գործի շրջանակներում առկա են տվյալ վեճի ենթակայության լուծման տարբեր դիրքորոշումներ՝ անհրաժեշտ է սույն գործի ենթակայության հարցի որոշման կապակցությամբ գործն ուղարկել Վճռաբեկ դատարանի նախագահին՝ այդ հարցի վերաբերյալ պարզաբանում և լուծում տալու նպատակով»:

6. Թիվ ՎԴ/3461/05/20 գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2021 թվականի ապրիլի 29-ին:

7. 2021 թվականի մայիսի 3-ին Վճռաբեկ դատարանի նախագահը դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ միջնորդելով որոշելու, ի թիվս այլնի, նաև թիվ ՎԴ/3461/05/20 գործի ենթակայության վերաբերյալ վեճի լուծման կապակցությամբ կիրառման ենթակա ՀՀ

քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրության մի շարք հոդվածներին համապատասխանության հարցը:

8. ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2021 թվականի հունիսի 25-ի թիվ ՍԴԱՈ-123 որոշմամբ Վճռաբեկ դատարանի նախագահի դիմումի հիման վրա գործի քննությունը մերժվել է:

9. ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2021 թվականի հունիսի 30-ին:

Ենթակայության մասին վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը.

10. Երևան քաղաքի ավագանու՝ 2019 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 163-Ա որոշմամբ հաստատվել է Երևանի քաղաքապետի՝ 2019 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 4678-Ա որոշումը և «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, որի 1.1-րդ կետի համաձայն՝ *««Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է Երևանի քաղաքապետի 2019 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 4678-Ա որոշմամբ՝ Երևան քաղաքի՝ կանաչապատման իրականացման, կանաչ տարածքների (տնկարկների) պահպանության, լանդշաֆտային պլանավորման, քարտեզագրման և վերամշակման ենթակա կոշտ կենցաղային թափոնների ընդունման, հավաքի, տեսակավորման, վերամշակման, ժամանակավոր պահեստավորման և հանձնման հետ կապված աշխատանքների կազմակերպման նպատակով (…)»:*

Կանոնադրության 1.2-րդ կետի համաձայն՝ «*Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, քաղաքացիական և աշխատանքային օրենսգրքերով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Գնումների մասին» օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ»:*

11. Երևանի քաղաքապետի՝ 2020 թվականի ապրիլի 13-ի թիվ 1423-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին մասը, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը և ՀՀ

տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի՝ 2020 թվականի մարտի 26-ի թիվ 02-Ն հրամանով հաստատված կարգի 10-րդ և 11-րդ կետերը, որոշվել է անցկացնել Երևան քաղաքի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) հրատապ մրցույթ:

Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր հաստիքը համալրելու հետ կապված վեճը բխում է հանրային, թե՞ մասնավոր իրավահարաբերություններից:*

13. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

14. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը (...)»:*

15. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:*

2. Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի (...)»:

Նույն օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ իրեն, այն պատճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդատության»:*

16. Սույն որոշման 13-15 կետերում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերի քննությունը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ օրենսդիրը սահմանել է վարչական դատարանին ենթակա գործերի շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերից ծագող գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

Հարկ է նշել, որ օրենսդիրը վարչական դատարանի ընդդատության և առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի ենթակայության կանոնների խախտման դեպքում նախատեսել է տարբեր իրավական հետևանքներ:

Այսպես՝ ի տարբերության քաղաքացիական դատավարության, որտեղ ենթակայության կանոնների խախտումը հայցադիմումի ընդունելության փուլում հանգեցնում է հայցադիմումի ընդունումը մերժելուն, վարչական դատավարությունում հայցվորի կողմից ընդդատության կանոնները չպահպանելու հետևանքը հայցադիմումը վերահասցեագրելու՝ վարչական դատարանի լիազորության իրացումն է: Վերոգրյալ կարգավորումների տարբերությունը պայմանավորված է վարչական արդարադատության առանձնահատկություններով, մասնավորապես՝ վարչական դատավարությունում դատարանի ակտիվ դերակատարմամբ:

Այսպիսով, յուրաքանչյուր դեպքում վարչական դատարանը պարտավոր է պարզել՝ արդյո՞ք կոնկրետ գործն ընդդատյա է (ենթակա է) տվյալ դատարանին, թե՝ ոչ, և նշված հարցի կապակցությամբ բացասական եզրահանգում կատարելու դեպքում պարտավոր է հայցադիմումը վերահասցեագրել ըստ ընդդատության: Նույն իրավիճակում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը պարտավոր է դրա ընդունումը մերժել՝ գործը քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա չլինելու հիմքով:

17. Հարկ է նշել, որ Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին մանրամասն անդրադարձ է կատարվել Վճռաբեկ դատարանի՝ *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության* վարչական գործով որոշմամբ[1] *և Անի Հակոբյանն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության* վարչական գործով որոշմամբ[2]:

18. Սույն գործով վիճելի իրավահարաբերության բնույթը պարզելու համար անհրաժեշտ է վերլուծել հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավական նորմերը:

19. Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 49-րդ հոդվածի համաձայն՝ *«Յուրաքանչյուր քաղաքացի ունի ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու իրավունք: Մանրամասները սահմանվում են օրենքով»:*

20. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Սույն օրենքով սահմանվում են Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության սկզբունքները, հանրային ծառայության անցնելու պահանջները, հանրային պաշտոնների դասակարգումը, հանրային ծառայողի հիմնական իրավունքները և պարտականությունները, սոցիալական երաշխիքները, պաշտոնների առանձնահատկությունները, բարեվարքության համակարգը, կարգավորվում են գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման հետ կապված հարաբերությունները»:*

Նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հանրային ծառայությունը հանրային իշխանության մարմիններին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը և հանրային պաշտոնները»:*

21. «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Սույն օրենքի իմաստով այլընտրանքային է համարվում ժամկետային պարտադիր զինվորական ծառայությանը փոխարինող ծառայությունը, որը կապված չէ զենք*

[1] Տե՛ս, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14 վարչական գործով որոշումը:
[2] Տե՛ս, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԵԿԴ/3246/02/13 վարչական գործով որոշումը:

կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու հետ ու իրականացվում է ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական հիմնարկներում»:

22. Սույն որոշման 20-21 կետերում վկայակոչված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ հանրային և այլընտրանքային ծառայության պաշտոնների դասակարգումը սահմանվում է համապատասխանաբար «Հանրային ծառայության մասին» և «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքներով:

23. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, ներառյալ՝ (...) հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը»:*

24. Նախորդ կետում նշված դրույթից հետևում է, որ վերոնշյալ գործերը Վարչական դատարանում քննության ենթակա լինելու համար առաջնահերթ պայման է տվյալ իրավահարաբերությունները «Հանրային ծառայության մասին» կամ «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքներով կարգավորված լինելու հանգամանքը:

25. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Երևան քաղաքի ավագանու՝ 2019 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 163-Ա որոշմամբ հաստատված՝ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 1.2-րդ կետի համաձայն՝ կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, քաղաքացիական և աշխատանքային օրենսգրքերով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Գնումների մասին» օրենքներով, այլ իրավական ակտերով և նշված կանոնադրությամբ:

- Երևանի քաղաքապետի՝ 2020 թվականի ապրիլի 13-ի թիվ 1423-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին մասը, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի՝ 2020 թվականի մարտի 26-ի թիվ 02-Ն հրամանով հաստատված կարգի 10-րդ և 11-րդ կետերը՝ որոշվել է անցկացնել Երևան քաղաքի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) հրատապ մրցույթ:

26. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 20-24 կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո, պետք է փաստել, որ Երևան քաղաքի ենթակայության ներքո գտնվող համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնը նախատեսված չէ հանրային կամ այլընտրանքային ծառայության պաշտոնների անվանացանկում: Նշվածից հետևում է, որ Երևան քաղաքի ենթակայության ներքո գտնվող համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ընտրության (նշանակման) մրցույթ անցկացնելու հետ կապված իրավական վեճը բխում է *մասնավոր իրավահարաբերությունից,* հետևաբար թիվ ՎԴ/3461/05/20 գործը ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ՎԴ/3461/05/20 գործն ըստ հայցի Արեգ Կարապետյանի ընդդեմ Երևանի քաղաքապետի՝ ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ